ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 196-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Դիմող) դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի փետրվարի 12-ին:

Դիմողը 2024 թվականի փետրվարի 8-ին որոշել է («Կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան դիմելու և դատալսումները հետաձգելու մասին» որոշում).

«1. Թիվ ԵԴ1/0413/11/23 դատական վարույթով կիրառման ենթակա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196 հոդվածի դրույթների սահմանադրականությունը որոշելու հարցով դիմել Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան:

(…)»:

2. Դիմողը, ներկայացնելով թիվ ԵԴ1/0413/11/23 քրեական գործի մինչդատական և դատավարական նախապատմությունը, նշում է.

«(…) Քրեական հետապնդում չհարուցելու կամ դադարեցնելու մասին որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-9-րդ կետերով նախատեսված հիմքերով կայացնելու դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դրա մեջ չպետք է տրվեն այնպիսի ձևակերպումներ, որոնք կասկածի տակ են դնում անձի անմեղությունը, իսկ եթե վարույթի հանրային մասնակցի կողմից օրենսդրական այդ պահանջը խախտվում է, ապա այդ որոշումը կարող է բողոքարկվել նաև այն անձի կողմից, ում նկատմամբ որ կայացվել է, քանի որ տվյալ որոշումն ուղղակիորեն առնչվում է վերջինի իրավաչափ շահերին:

Նկարագրված իրավիճակում դիմելով դատական պաշտպանության, անձը հայտնվում է հակասական իրավիճակում: Մասնավորապես՝ դիմելով դատարան և տրված ձևակերպումների մասով վիճարկելով քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին որոշումը՝ անձն ակնկալում է իր իրավունքների և իրավաչափ շահերի խախտումների վերացում, մինչդեռ դատարանի կողմից նրա բողոքի բավարարումը մեխանիկորեն հանգեցնում է վերջինի նկատմամբ «քրեական հետապնդման հարուցման»: Ընդ որում, դատախազը, հանդիսանալով պետական պաշտոնատար անձ, և իրավասու լինելով կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է օրենքով, չի կարող շրջանցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 11-րդ մասի իմպերատիվ պահանջը:

Վերոգրյալի պայմաններում Դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196 հոդվածը պարունակում է այնպիսի կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք անձին զրկում են իր իրավունքների և ազատությունների դատական արդյունավետ պաշտպանության իրական հնարավորությունից՝ այդ կերպ ուղղակիորեն հակասելով ՀՀ Սահմանադրության 61 հոդվածին:

(…)

Այսպիսով.

Դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԴ1/0413/11/23 դատական վարույթով կիրառման ենթակա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196 հոդվածի դրույթները առերևույթ հակասում են ՀՀ Սահմանադրության 61 հոդվածի պահանջներին և սույն վարույթի լուծումը հնարավոր է միայն նշված հոդվածի կիրառմամբ (…) »:

3. Ուսումնասիրելով դիմումը և թիվ ԵԴ1/0413/11/23 քրեական գործի նյութերը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ սահմանադրական օրենք) 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ գործի քննությունն ամբողջությամբ մերժելու հիմք՝ ներքոնշյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին համապատասխան՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն ամրագրված է նաև սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը պետք է հիմնավորի իր դիրքորոշումը նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ գործի լուծումը հնարավոր է միայն վիճարկվող

դրույթի կիրառման միջոցով:

Սահմանադրական դատարանը շեշտում է, որ դատարանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանի կողմից կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում սահմանադրական արդարադատության իրականացումը հետապնդում է դատարանի կողմից ենթադրյալ հակասահմանադրական նորմի հիման վրա կոնկրետ վեճի լուծումը կանխելու նպատակ: Սահմանադիրը, իբրև սահմանադրականության հաստատման և սահմանադրական իրավակարգի ամրապնդման հիմնարար երաշխիք, Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով դատարանին վերապահել է Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն՝ միաժամանակ հստակ ուրվագծելով սույն իրավասության իրացման շրջանակները, այն է՝

ա) դատարանն իր այս իրավասությունն իրացնում է բացառապես իր վարույթում գտնվող կոնկրետ գործով, այսինքն՝ տվյալ գործը ոչ միայն դատավարական (ֆորմալ) առումով գտնվում է դատարանի վարույթում, այլև գործի/նյութի (վեճի) լուծումը գտնվում է դատարանի իրավազորության տիրույթում,

բ) այն պարագայում, երբ դատարանը հիմնավոր կասկած ունի տվյալ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ, և

գ) տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով:

Սահմանադրական դատարանը 2022 թվականի մայիսի 6-ի ՍԴԱՈ-83 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է. «Դատարանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանի կողմից կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում սահմանադրական արդարադատության իրականացումը հետապնդում է դատարանի կողմից ենթադրյալ հակասահմանադրական նորմի հիման վրա կոնկրետ վեճի լուծումը կանխելու նպատակ: *Այդ առումով առանցքային կարևորություն ունի դատարանի կողմից ներկայացված դիմումի շրջանակում, ի թիվս այլնի, վիճարկվող նորմի՝ Սահմանադրությանն անհամապատասխանությունը հիմնավորող այն պատշաճ պատճառաբանության ներկա-*

յացումը, որը կբացահայտի դատարանի՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով «հիմնավոր կասկած» ունենալու սահմանադրական պահանջը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ *վիճարկվող նորմի սահմանադրականության վերաբերյալ դատավորի սուբյեկտիվ դիրքորոշումն արտահայտում է վերջինիս ներքին համոզմունքը, որը չի կարող հիմնվել սոսկ ենթադրությունների կամ չպատճառաբանված դատողությունների վրա, ուստի Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշումը պետք է բովանդակի վիճարկվող իրավադրույթի՝ Սահմանադրության համապատասխան հոդվածի համատեքստում ենթադրյալ հակասահմանադրականությունը հիմնավորող պատճառաբանությունների վերաբերյալ համապատասխան վերլուծություն, որը օբյեկտիվ հիմք է հանդիսացել դատավորի ներքին համոզմունքի ձևավորման համար*»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն դիմումով բարձրացված խնդիրների համատեքստում անձի վարութային իրավունքի պաշտպանության բանալին գտնվում է ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 11-րդ մասի վերաբերելի կարգավորման, այլ նույն օրենսգրքի 304-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում դատարանի կողմից կայացվելիք որոշման բովանդակության մեջ:

Այսինքն՝ երբ անձը, փաստացի համաձայն լինելով քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին որոշման էության հետ, վիճարկում է միայն դրա բովանդակության անհամապատասխանությունն օրենսգրքով սահմանված հատուկ պահանջներին, ապա բողոքի բավարարման դեպքում անձի իրավունքի արդարացի պաշտպանությունը պետք է արտահայտվի դատարանի կողմից վարույթի հանրային մասնակցի համար այդ պահանջից բխող համարժեք պարտականություն սահմանելու տեսքով:

Հետևաբար՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողի կողմից չեն ներկայացվել սույն դիմումի շրջանակներում վիճարկվող դրույթների

ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ բավարար հիմնավորումներ, ուստիև չի հիմնավորվել վիճարկվող նորմի հակասահմանադրականության հիմնավոր կասկածը:

Սույն գործով Սահմանադրական դատարանը վերահաստատում է նաև իր իրավական դիրքորոշումն առ այն, որ «Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի դեկտեմբերի 3-ի ՍԴԱՈ-248 աշխատակարգային որոշմամբ սահմանադրական արդարադատություն հայցող սուբյեկտներին ուղղված՝ առավել բարձր մակարդակի փութաջանություն ցուցաբերելու հորդորը վերաբերելի է նաև դատարաններին, որոնք, կոնկրետ գործերով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու դեպքում Սահմանադրական դատարան դիմելով, անառարկելիորեն նպաստում են մարդու հիմնական իրավունքների երաշխավորման, ապահովման և պաշտպանության սահմանադրական երաշխիքների ամրապնդմանն ու սահմանադրական արդարադատության շարունակական զարգացմանը» (2022 թվականի մայիսի 6-ի ՍԴԱՈ-83 աշխատակարգային որոշում):

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում շեշտել, որ Դիմողը Սահմանադրական դատարան դիմելու մասին իր որոշման եզրափակիչ մասում արձանագրել է հետևյալը. «Դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԴ1/0413/11/23 դատական վարույթով կիրառման ենթակա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196 հոդվածի դրույթները առերևույթ հակասում են ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի պահանջներին...»: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը:

Հետևապես՝ բացառապես Սահմանադրական դատարանն է իրավասու իր որոշմամբ եզրահանգելու և արձանագրելու վիճարկվող իրավական նորմի՝ Սահմանադրությանը հակասությունը:

Վերոգրյալը Սահմանադրական դատարանին հիմք է տալիս եզրահանգելու, որ Դիմողը չի հաղթահարել Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով վիճարկվող նորմերի սահմանադրականության վերաբերյալ «հիմնավոր կասկած ունենալու» օրենսդրական պահանջը: Նման պայմաններում Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա է սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ գործի քննությունն ամբողջությամբ մերժելու հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 71-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի պահանջները՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

«ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

15 մարտի 2024 թվականի
ՍԴԱՈ-44